



### **ԹԱՂԵՎՈՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի  
նախարարի տեղակալ,  
ՀՊՏՀ միջազգային տնտեսական  
հարաբերությունների ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու*

### **ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների  
ազգային ինստիտուտի տնօրեն,  
ՀՊՏՀ տնտեսական ինֆորմատիկայի և  
տեղեկատվական համակարգերի  
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու*

### **ՏԱԹԵՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

*ՀՊՏՀ միջազգային տնտեսական  
հարաբերությունների ամբիոնի ասիստենտ*

## **ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԵՎ ԸՆՏՐՈՎԻ ՄԱԿՐՈՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈԽԱՐՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)**

*Հոդվածում քննարկում են նվազագույն աշխատավարձի դերն ու նշանակությունը երկրում առողջ սոցիալ-տնտեսական միջավայր ձևավորելու համատեքստում: Գնահատվում է Հայաստանում վարձատրության հիմնական տվյալների և տնտեսական աճն ու զբաղվածությունը բնութագրող տվյալների միջև կորելյացիոն կապը: Կատարվել է նկարագրողական վերլուծություն ըստ 22 երկրի, որի արդյունքում բացահայտվել է, որ նվազագույն աշխատավարձը դիտարկված երկրներում էապես զգայուն է միջին աշխատավարձի նկատմամբ: Իրականացվել է նաև նվազագույն աշխատավարձի ռեգրեսիոն մոդելի մշակում:*


**Հիմնաբառեր.** նվազագույն աշխատավարձ, պետական կարգավորում, նվազագույն աշխատավարձի արդյունավետ չափ, նկարագրողական վերլուծություն, գործոնային վերլուծություն, ռեգրեսիոն մոդել

JEL: E24, E27, J3

Նվազագույն աշխատավարձը արժանապատիվ աշխատանքի ապահովման հիմնական գործիքներից է, միևնույն ժամանակ կարող է սոցիալական պաշտպանության քաղաքականության շրջանակներում դիտարկվել որպես աղքատության հաղթահարման արդյունավետ միջոց: ՀՀ անկախացումից ի վեր նվազագույն աշխատավարձի ինստիտուցիոնալ համակարգը փոփոխվել է և աստիճանաբար համապատասխանեցվել զարգացած երկրներում կիրառվող փորձին:

ՀՀ-ում ներկայումս նվազագույն աշխատավարձը սահմանված է միայն ազգային մակարդակում, թեև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 179-րդ հոդվածը թույլ է տալիս տնտեսության առանձին ճյուղերի, բնակավայրերի, աշխատողների որոշակի խմբերի համար սահմանել ամսական նվազագույն աշխատավարձի (ժամավճարի) այլ չափ:

Գծանկար 1-ից պարզ է դառնում, որ նվազագույն աշխատավարձի, ինչպես նաև միջին ամսական անվանական աշխատավարձի շարժընթացը 2006–2016 թթ. ունի ընդգծված աճի միտում:



**Գծանկար 1.** Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձը և միջին ամսական անվանական աշխատավարձը 2006–2016 թթ.<sup>1</sup>

<sup>1</sup> Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալները:

2006–2016 թթ. ժամանակահատվածում աճել են աշխատավարձի ցուցանիշները, առանձնապես՝ տասնամյակի առաջին տարիներին՝ 2006–2011 թթ.: Աճի միտումը շարունակվել է նաև հաջորդ հինգ տարիներին, բայց նկատելիորեն ցածր տեմպերով՝ հատկապես անվանական աշխատավարձի ցուցանիշում: Արդյունքում՝ դիտարկվող տասնամյակի ընթացքում առավելագույն աճ արձանագրվել է նվազագույն աշխատավարձի ցուցանիշում՝ 14.4 տոկոսային կետի հավելաճով: Չնայած 2008 թ. ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները դրսևորեցին նվազման միտում, այդուհանդերձ, միջին ամսական անվանական աշխատավարձը դիտարկվող ժամանակահատվածում աճել է:

Եկոնոմետրիկ (տնտեսաչափական) վերլուծությունները վկայում են, որ ՀՀ վարձատրության մակրոցուցանիշները հիմնականում կոռելացված են տնտեսական աճը և զբաղվածությունը բնութագրող ցուցանիշների հետ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

**Աշխատավարձի և սպառողական զների հնդեքսի ժամանակագրական շարքեր, 2007–2016 թթ.**

Տարեթիվ	Օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձ (<< դրամ)	Միջին ամսական անվանական աշխատավարձ (<< դրամ)	Սպառողական զների հնդեքս (%)	Իրական աշխատավարձի հնդեքս (%)
2007	20000	74 227	104.4	114.1
2008	25000	87 406	109.0	108.0
2009	30000	96 019	103.4	106.2
2010	30000	102 652	108.2	98.8
2011	32500	108 092	107.7	97.8
2012	32 500	113 163	102.6	102.0
2012 <sup>2</sup>	32 500	140 739	102.6	102.0
2013 <sup>3</sup>	40000	146 524	105.8	98.4
2014 <sup>3</sup>	47500	158 580	103.0	105.1
2015	52500	171 615	103.7	104.4
2016	55000	174 445	98.6	103.1

Շուկայական տնտեսությանն անցումից հետո ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի չափի սահմանումը և դրա բարձրացումը իրականացվում են՝ հիմնականում ելնելով ՀՀ պետական բյուջեի հնարավորություններից: ՀՀ Կառավարության 2013–2017թթ. ծրագրով<sup>4</sup> հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված է նվազագույն աշխատավարձի աստիճանական բարձրացում՝ 2017 թ. հասցնելով 2012 թ. սահմանված չափի կրկնապատիկին:

Նվազագույն աշխատավարձի չափի փոփոխության մեջ ամբողջապես հաշվի չեն առնվում մի շարք կարևոր սոցիալ-տնտեսական գործոնների հետ հնարավոր փոխառնչությունները: Ղրա պատճառով նվազագույն աշխատավարձը, որպես ՀՀ-ում աշխատավարձերի պետական կարգավորման հիմնական գործիք, սոցիալական և տնտեսական ոլորտներում չի կարող արդյունավետ և լիովին իրացնել իր խթանող, կանխարգելող և կարգավորող ներուժը:

<sup>2</sup> 2012–2013 թթ. աշխատավարձի ցուցանիշների համադրելիությունն ապահովվելու նպատակով 2012 թ. ցուցանիշը վերահաշվարկվել է ըստ 01.01.2013 թ. ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-246):

<sup>3</sup> 2013–2014 թթ. նվազագույն աշխատավարձի միջին տարեկան ցուցանիշը հաշվարկվել է հունվարի 1-ի և հուլիսի 1-ի դրությամբ սահմանված ցուցանիշների միջին թվաբանականով:

<sup>4</sup> Տե՛ս <http://www.gov.am/files/docs/970.pdf>

Նվազագույն աշխատավարձի չափման, գնահատման խնդիրները մեթոդավորված չեն. չկան հստակեցված և հրապարակային մոտեցումներ, չկա որոշակի մեթոդաբանություն, որը հնարավորություն կտա գնահատելու երկրում նվազագույն աշխատավարձի սահմանման արդյունավետ մակարդակ: Աշխատանքի միջազգային կազմակերպության «Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին» կոնվենցիան պարտավորեցնում է նվազագույն աշխատավարձի սահմանման համակարգի ստեղծում այն երկրներում, որոնց աշխատանքի պայմանները նպատակահարմար են դարձնում այդպիսի համակարգի կիրառումը<sup>5</sup>: Կարծում ենք՝ առկա և տեսականորեն հիմնավոր գնահատման մոտեցումները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1. *Համեմատական մոտեցում*. չափը որոշվում է տարածաշրջանի երկրների, տնտեսական փոխադարձ ինտեգրվածությամբ երկրների, մակրոտնտեսական նմանություն ունեցող երկրների միջին աշխատավարձերի միջոցով:
2. *Գործունային վերլուծություն (պարզ եղանակ)*. ըստ տարբեր երկրների առանձին ցուցանիշներից որոշակի ձևով միջինացված գնահատականի ստացում և կիրառում: Էկոնոմետրիկ վերլուծություն. մի քանի ցուցանիշների ներառմամբ ռեգրեսիոն մոդելի կառուցում և կիրառում:
3. *Բյուջեի սահմանափակումներով հաշվարկ*. կիրառելի է այն երկրներում, որտեղ սոցիալապես թույլ պաշտպանված հասարակությունը մեծ կախում ունի բյուջեից, ինչը շուկայական տնտեսություններում հազվադեպ է լինում:
4. *Աղքատության հաղթահարման, կենսամակարդակի բարձրացման, աշխատավարձերի մեծ շեղումների (անհավասարությունների) զսպման նպատակային քաղաքականության նպատակաուղղված ինտերվենցիա*. նվազագույն աշխատավարձի բարձրացումը հիմնավորվում է նշված քաղաքականության իրագործմամբ, այլ ոչ թե պայմանավորված այլ երկրների իրավիճակով և այլ սահմանափակումներով: Եվ կատարվում է այն չափով, որը թույլ կտա իրականացնել քաղաքականության նպատակները:

Նշված մոտեցումները կարելի է կիրառել նաև միասնաբար:

Համաձայն թվային շարքերի միջոցով մեր կատարած որոշ ուսումնասիրությունների՝ նվազագույն աշխատավարձի չափը կարող է բացատրվել երկրի տնտեսական աճի, զբաղվածության ցուցանիշների և սոցիալական-տնտեսական այլ գործոններով: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հետ նվազագույն աշխատավարձի համեմատության առավելությունն այն է, որ այս ցուցանիշն առկա է բոլոր երկրների համար: Սակայն մեծ, ոչ ֆորմալ տնտեսությամբ երկրների պարագայում պատկերը կարող է խեղաթյուրված լինել: Երկրների մեծ մասում այդ հարաբերությունը 0.3–0.6 սահմաններում է: Սակայն զարգացող երկրների մի խմբում (մասնավորապես՝ բնական ռեսուրսներ արտահանող) այդ հարաբերությունը 0.15–0.3-ի սահմաններում է: Ջարգացող երկրների մեկ ուրիշ խմբում այդ ցուցանիշը մեկից մեծ է: Դրանք հիմնականում շատ ցածր եկամտի մակարդակ ունեցող երկրներն են<sup>6</sup>:

<sup>5</sup> Տե՛ս <http://www.parliament.am/library/bazmakoxm/118.pdf>

<sup>6</sup> Տե՛ս **Saget Catherine**, Fixing Minimum Wage Levels in Developing Countries: Common Failures and Remedies, International Labour Office, Geneva, Mar., 2006, էջ 7–9:

Նվազագույն աշխատավարձը միջին աշխատավարձի հետ համեմատելու դեպքում Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) հետազոտությունները ցույց են տալիս, որ այս հարաբերությունը խիստ տարբեր է ըստ երկրների, սակայն հիմնականում տատանվում է 0.4-ի սահմաններում<sup>7</sup>:

Նվազագույն աշխատավարձով կարելի է բացատրել նաև աշխատավարձերի անհավասարության խորացումը կամ կրճատումը. դա, մասնավորապես, հաստատվել է ԱՄՆ-ում և Նիդեռլանդներում կատարված հետազոտություններով<sup>8</sup>: Ջարգացող երկրներից, օրինակ, Բրազիլիայում, որտեղ աշխատողների 12.5%-ը ստանում է նվազագույն աշխատավարձ, նույնպես հաստատվել է նվազագույն աշխատավարձի ազդեցությունը աշխատավարձերի բաշխման խտացման վրա: Նվազագույն աշխատավարձն օգնում է նաև կրճատելու աշխատավարձի գենդերային տարբերությունները՝ բաշխման ստորին մակարդակում:

Համաշխարհային միտումների ուսումնասիրությունը վկայում է, որ աշխատավարձերի միջև տարբերությունները վերջին տասնամյակում էապես մեծացել են հատկապես տնտեսական ճգնաժամ անցած և անցումային երկրներում (Արգենտինա, Կորեայի Հանրապետություն, Թաիլանդ, Բուլղարիա, Լեհաստան, Հունգարիա): Ընդ որում, զարգացող երկրների հիմնական մասում անհավասարությունն աճել է նվազագույն աշխատավարձերի համեմատաբար դանդաղ աճի հետևանքով, մինչդեռ որոշ զարգացած երկրներում (ԱՄՆ, Միացյալ Թագավորություն) անհավասարությունն ավելացել է առավելագույն աշխատավարձերի արագ աճի արդյունքում: Ընդհանուր առմամբ, ԱՄԿ հետազոտությունները ցույց են տալիս, որ կոլեկտիվ համաձայնագրերի մեծ ծածկույթ ունեցող երկրները, որպես կանոն, ունեն աշխատավարձի ավելի քիչ անհավասարություններ<sup>9</sup>: Այս անհավասարությունները սովորաբար բնութագրվում են Ջինիի գործակցով և դեցիլների հարաբերությամբ՝ վերին ու ստորին դեցիլների միջև (D9/D1) և մեդիանի ու ստորին (վերին) դեցիլի միջև (D5/D1, D9/D5):

Աղյուսակ 2

*Նվազագույն աշխատավարձի նկարագրողական վերլուծություն՝ ըստ 26 երկրի (եվրո)*

<i>Min Wage</i>	
Mean	718.8076923
Standard Error	104.7287194
Median	456.5
Mode	1563
Standard Deviation	534.013784
Sample Variance	285170.7215
Kurtosis	0.418136119
Skewness	1.223756717
Range	1934
Minimum	181
Maximum	2115
Sum	18689
Count	26

<sup>7</sup> St'u Global Wage Report 2008/09. Minimum wages and collective bargaining: Towards policy coherence, International Labour Office, Geneva, 2008, էջ 48:

<sup>8</sup> St'u **Saget Catherine**, How to get the maximum out of the minimum wage, International Labour Office, 2012, էջ 70:

<sup>9</sup> St'u Global Wage Report 2008/09. Minimum wages and collective bargaining: Towards policy coherence, International Labour Office, Geneva, 2008, էջ 23–26:

Կատարվել է նկարագրողական վերլուծություն 22 երկրների ընդգրկմամբ: Միջին նվազագույն աշխատավարձը 2016 թ. տվյալներով կազմել է 718.8 եվրո, մեդիանը՝ 456.5 եվրո, վարիացիայի թափը՝ 1934 եվրո: Հատկանշական է, որ, ըստ երկրների, այս ցուցանիշն ունի էապես մեծ վարիացիա. միջին քառակուսային շեղումը կազմել է 534 եվրո:

Մյուս կողմից՝ համադրելով ըստ երկրների միջին աշխատավարձի նկարագրողական ցուցանիշները, պարզ է դառնում, որ դրանց վարքագիծն էապես նման է նվազագույն աշխատավարձի շարքի վարքագծին: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ նվազագույն աշխատավարձն ընտրված երկրներում էապես զգայուն է միջին աշխատավարձի նկատմամբ.

Աղյուսակ 3

*Միջին աշխատավարձի նկարագրողական վերլուծություն՝  
ըստ 26 երկրի (եվրո)*

<i>Ave Wage</i>	
Mean	1544.962
Standard Error	229.332
Median	1051.5
Mode	#N/A
Standard Deviation	1169.368
Sample Variance	1367423
Kurtosis	1.616294
Skewness	1.515102
Range	4523
Minimum	419
Maximum	4942
Sum	40169
Count	26

Հաշվարկվել է նաև ըստ երկրների նվազագույն աշխատավարձի չափը մեկ անձին բաժին ընկնող ՀՆԱ-ում:

Աղյուսակ 4-ից երևում է, որ միջին ցուցանիշը 4.06% է, առավելագույնը՝ 5.79%. թվաբանական միջինը կարելի է օգտագործել որպես կողմնորոշիչ: ՀՀ նույն ցուցանիշը կազմել է 3.24%, այսինքն՝ նման է ուսումնասիրված երկրների ցուցանիշներին:

Աղյուսակ 4

*Նվազագույն աշխատավարձի մասնաբաժինը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ում.  
նկարագրողական վերլուծություն ըստ 26 երկրի (%)*

<i>Min Wage/GDPPC</i>	
Mean	4.058015
Standard Error	0.154013
Median	4.08073
Mode	#N/A
Standard Deviation	0.785315
Sample Variance	0.61672
Kurtosis	0.415278
Skewness	0.38695
Range	3.249066
Minimum	2.545455
Maximum	5.794521
Sum	105.5084
Count	26

Հաշվի առնելով մեկ անձին բաժին ընկնող ՀՆԱ-ում նվազագույն աշխատավարձի մասնաբաժնի միջինն ըստ 26 երկրների՝ 4.06%, կարելի է հաշվարկել ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի նոր մեծությունը:

Հաշվարկվել է նաև ըստ երկրների նվազագույն աշխատավարձի մասնաբաժինը միջին աշխատավարձի մեջ:

Աղյուսակ 5

**Նվազագույն աշխատավարձի մասնաբաժինը միջին աշխատավարձի մեջ**

Երկիր	Նվ. աշխ./միջ. աշխ. (%)
Բելգիա	45.96
Բուլղարիա	44.26
Չեխիա	37.47
Էստոնիա	37.84
Հունաստան	62.64
Իսպանիա	37.73
Լատվիա	40.34
Լիտվա	45.29
Հունգարիա	41.80
Մալթա	72.09
Լեհաստան	47.49
Պորտուգալիա	56.13
Ռումինիա	44.62
Սլովենիա	49.91
Սլովակիա	46.08
ՄԹ	59.02
Խորվաթիա	40.85
Թուրքիա	48.31
Ֆրանսիա	50.05
Գերմանիա	40.45
Իռլանդիա	49.89
Վրասիա	43.20
Մակեդոնիա	43.88
Սերբիա	46.34
Մոնտենեգրո	37.70
Իսլանդիա	42.80
<b>Միջինը</b>	<b>46.62</b>

ՀՀ նույն ցուցանիշը կազմում է 42%: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս ցուցանիշը հիմնականում պայմանավորված չէ տնտեսության զարգացման աստիճանով (օրինակ՝ Հունաստանում այս ցուցանիշը 62.6% է, Մալթայում՝ 72.1%), կարծում ենք՝ նպատակահարմար է առաջնորդվել ներկայացված զարգացող և զարգացած երկրների տվյալներով: Նշված 22 երկրների համար ցուցանիշի միջինը 46.6% է, ինչը, որոշ չափով, վկայում է այն մասին, որ ՀՀ-ում նվազագույն աշխատավարձը, հաշվի առնելով ներկայացված երկրների սոցիալ-տնտեսական ցուցանիշների հարաբերակցությունները, պետք է ունենա աճի միտում:

Հիմք ընդունելով ձևավորված նվազագույն աշխատավարձի և միջին աշխատավարձի հարաբերության միջինն ըստ 26 երկրների՝ 46.6%, կարելի է հաշվարկել ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի նոր մեծություն:

Նվազագույն աշխատավարձի էկոնոմետրիկ վերլուծության նպատակով, որպես կախյալ փոփոխական, ներառվել է բացարձակ  $Y_{mw}$  մեծությունը՝ ըստ երկրների: Հաշվի առնելով նվազագույն աշխատավարձի նպատակի վերլուծությունը, ՀՀ իրավիճակային և միջազգային փորձի ուսումնասիրու-

թյունները՝ կանխորոշվել են այն հիմնական գործոնները, որոնք, բովանդակային առումով, կարող են բացատրել  $Y_{mw}$ -ի հիմնավոր արժեքը: Անկախ փոփոխականներ ընտրելիս առաջին հերթին հաշվի ենք առել ԱՄԿ ցուցումները<sup>10</sup>:

Աղյուսակ 6

**Նվազագույն աշխատավարձի վրա ազդող առանձնացված գործոններ**

Երկիր	Նվազագույն ամսական աշխատավարձ (եվրո) <sup>11</sup>	Մեկ շնչին բաժին ընկնող ամսական ՀՆԱ (եվրո) <sup>12</sup>	Միջին ամսական աշխատավարձ (եվրո) <sup>13</sup>	Գլոբալ ձեռնարկատիրական ինդեքս <sup>14</sup>
Բելգիա	1563	34500	3401	63
Բուլղարիա	235	6000	531	23
Չեխիա	420	16500	1121	42
Եստոնիա	470	13700	1242	56
Հունաստան	684	17100	1092	35
Իսպանիա	826	23800	2189	45
Լատվիա	380	11000	942	43
Լիտվա	380	12000	839	50
Հունգարիա	413	11300	988	36
Մալթա	736	20100	1021	37
Լեհաստան	473	11200	996	47
Պորտուգալիա	650	16900	1158	47
Ռումինիա	319	7600	715	37
Սլովենիա	805	18500	1613	52
Սլովակիա	435	14600	944	44
ՄԹ	1397	31700	2367	71
Խորվաթիա	442	10900	1082	31
Թուրքիա	443	10788	917	44
Ֆրանսիա	1480	31700	2957	64
Գերմանիա	1498	34600	3703	65
Իռլանդիա	1563	53600	3133	71
Ալբանիա	181	3500	419	23
Սակեդոնիա	240	5237	547	29
Սերբիա	253	4400	546	23
Մոնտենեգրո	288	6701	764	30
Իսլանդիա	2115	36500	4942	74

Էկոնոմետրիկ վերլուծության նպատակով վերջնական գործոններ ընտրելու համար անհրաժեշտ է կատարել կոռելյացիոն վերլուծություն, որի արդյունքում հնարավոր գործոններից բարձր կոռելյացիոն գործակիցներով և վիճակագրական թեստերի համեմատաբար լավ ցուցանիշներով կառանձ-

<sup>10</sup> Stü Global Wage Report 2014/15. Minimum wages and collective bargaining: Towards policy coherence, International Labour Office, Geneva, 2015:

<sup>11</sup> Աղբյուրը՝ Eurostat, Monthly minimum wages - bi-annual data, [http://appsso.eurostat.ec.europa.eu/nui/show.do?query=BOOKMARK\\_DS-076596\\_QID\\_4A55F5C3\\_UID\\_-3F171EB0&layout=TIME,C,X,0;GEO,L,Y,0;CURRENCY,L,Z,0;INDICATORS,C,Z,1;&zSelection=DS-076596CURRENCY,EUR;DS-076596INDICATORS,OBS\\_FLAG;&rankName1=CURRENCY\\_1\\_2\\_-1\\_2&rankName2=INDICATORS\\_1\\_2\\_-1\\_2&rankName3=TIME\\_1\\_0\\_0\\_0&rankName4=GEO\\_1\\_2\\_0\\_1&sortC=ASC\\_-1\\_FIRST&rStp=&cStp=&rDCh=&cDCh=&rDM=true&cDM=true&footnes=false&empty=false&wai=false&time\\_mode=ROL\\_LING&time\\_most\\_recent=true&lang=EN&cfo=%23%23%23%2C%23%23%23.%23%23%23](http://appsso.eurostat.ec.europa.eu/nui/show.do?query=BOOKMARK_DS-076596_QID_4A55F5C3_UID_-3F171EB0&layout=TIME,C,X,0;GEO,L,Y,0;CURRENCY,L,Z,0;INDICATORS,C,Z,1;&zSelection=DS-076596CURRENCY,EUR;DS-076596INDICATORS,OBS_FLAG;&rankName1=CURRENCY_1_2_-1_2&rankName2=INDICATORS_1_2_-1_2&rankName3=TIME_1_0_0_0&rankName4=GEO_1_2_0_1&sortC=ASC_-1_FIRST&rStp=&cStp=&rDCh=&cDCh=&rDM=true&cDM=true&footnes=false&empty=false&wai=false&time_mode=ROL_LING&time_most_recent=true&lang=EN&cfo=%23%23%23%2C%23%23%23.%23%23%23)

<sup>12</sup> Աղբյուրը՝ Eurostat, Real GDP per capita, growth rate and totals <http://ec.europa.eu/eurostat/tgm/table.do?tab=table&init=1&language=en&pcode=tsdec100&plugin=1>

<sup>13</sup> Աղբյուրը՝ <https://countryeconomy.com/labour/average-wage> ; <https://www.reinisfischer.com/average-salary-european-union-2015> ; [https://en.wikipedia.org/wiki/List\\_of\\_European\\_countries\\_by\\_average\\_wage](https://en.wikipedia.org/wiki/List_of_European_countries_by_average_wage)


<sup>14</sup> Աղբյուրը՝ <http://thegedi.org/global-entrepreneurship-and-development-index/>



նացվեն ուսումնասիրված երկրներում նվազագույն աշխատավարձի վրա առավել մեծ ազդեցություն ունեցող վերջնական գործոններ: Ըստ մեր հաշվարկների՝ լավագույն գործոններ են մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն, միջին աշխատավարձը, գլոբալ ձեռնարկատիրական ինդեքսը: Մոդելավորման համար չընտրված գործոնները՝ զնաձ, սպառողական զների ինդեքս, սոցիալական ծախսեր, Զինիի գործակից և այլն, ոչ միայն ունեն համեմատաբար ցածր կոռելյացիոն գործակիցներ, քանի որ, ի տարբերություն մյուս փոփոխականների, դրանց մեծ մասը դինամիկ բնույթի ցուցանիշներ են և առանձին կիրառելի չեն:

Մյուս կողմից՝ չընտրված փոփոխականների մասով չի բացահայտվել բավարար էկոնոմետրիկ ճշտություն: Այս առումով, մասնավորապես զնաձը կարելի է գործադրել աշխատավարձի նկատմամբ ավտոմատ ինդեքսավորմամբ, ինչպես արվում է մի շարք երկրներում: Ինչ վերաբերում է սոցիալական ծախսերին, ապա այստեղ խնդիր է առաջանում ՀՀ համապատասխան թվի և ըստ երկրների առկա թվերի համադրելիության շուրջ. Եվրոպական միությունում այս ցուցանիշը ներառում է ՀՀ պարագայում անկիրառելի տարրեր<sup>15</sup>:

Կոռելյացիոն գործակիցներից ակնհայտ երևում է, որ ընտրված գործոններն էական ազդեցություն ունեն նվազագույն աշխատավարձի չափի վրա: Այս արդյունքը մենք օգտագործելու ենք նվազագույն աշխատավարձի ռեգրեսիոն մոդելի մշակման համար:



Չճանկար 2. Գրաֆիկական կոռելյացիոն մատրից

<sup>15</sup> Տե՛ս OECD Employment Outlook 2015 - Statistical Annex: Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2014, ԱԿԾ: Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ. հունվար-դեկտեմբերին, ԱԿԾ:

Կառուցված ռեգրեսիոն մոդելի էկոնոմետրիկ հաշվետվություններից երևում է, որ բազմակի կոռելյացիայի գործակիցը բավականին բարձր է, և էկոնոմետրիկ թեստերի ցուցանիշներն ընդունելի են: Ստացված ռեգրեսիոն մոդելի տեսքը հետևյալն է.

$$Y_{mw} = -57.399 + 0.012x_1 + 0.316x_2 + 1.755x_3, \tag{1}$$

- որտեղ՝  $Y_{mw}$  – ը նվազագույն աշխատավարձի կախյալ փոփոխականն է,  
 $x_1$  – ը՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն,  
 $x_2$  – ը՝ միջին աշխատավարձը,  
 $x_3$  – ը՝ գլոբալ ձեռնարկատիրական ինդեքսը:

Այսպիսով՝ նվազագույն աշխատավարձի հաշվարկման նպատակով կիրառված նոր մոտեցումը բնութագրում է տնտեսության հետ հիմնական առնչությունները: Մոդելը հնարավորություն է տալիս օգտագործելու երկրում նվազագույն աշխատավարձի շարունակական մշտադիտարկման և գնահատման կայուն գործիքակազմ՝ հաշվի առնելով նաև նվազագույն աշխատավարձի չափի կառավարման առանձնահատկությունները:

**Օգտագործված գրականություն**

1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թ. հունվար-դեկտեմբերին, ԱՎԾ:
2. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը:
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2014, ԱՎԾ:
4. Saget Catherine, Fixing Minimum Wage Levels in Developing Countries: Common Failures and Remedies, International Labour Office, Geneva, Mar., 2006.
5. Global Wage Report 2008/09. Minimum wages and collective bargaining: Towards policy coherence, International Labour Office, Geneva, 2008:
6. Saget Catherine, How to get the maximum out of the minimum wage, International Labour Office, 2012.
7. Global Wage Report 2008/09. Minimum wages and collective bargaining: Towards policy coherence, International Labour Office, Geneva, 2008.
8. Global Wage Report 2014/15. Minimum wages and collective bargaining: Towards policy coherence, International Labour Office, Geneva, 2015.
9. Eurostat, Monthly minimum wages - bi-annual data, [http://appsso.eurostat.ec.europa.eu/nui/show.do?query=BOOKMARK\\_DS-076596\\_QID\\_4A55F5C3\\_UID\\_-3F171EB0&layout=TIME,C,X,0;GEO,L,Y,0; CURRENCY,L,Z,0; INDICATORS,C,Z,1;&zSelection=DS-076596CURRENCY, EUR;DS-076596INDICATORS,OBS\\_FLAG;&rankName1=CURRENCY\\_1\\_2\\_-1\\_2&rankName2=INDICATORS\\_1\\_2\\_-1\\_2&rankName3=TIME\\_1\\_0\\_0\\_0&rankName4=GEO\\_1\\_2\\_0\\_1&sortC=ASC\\_-1\\_FIRST&rStp=&cStp=&rDCh=&cDCh=&rDM=true&cDM=true&footnes=false&empty=false&wai=false&time\\_mode=ROLLING&time\\_most\\_recent=true&lang=EN&cfo=%23%23%23%2C%23%23%23.%23%23%23](http://appsso.eurostat.ec.europa.eu/nui/show.do?query=BOOKMARK_DS-076596_QID_4A55F5C3_UID_-3F171EB0&layout=TIME,C,X,0;GEO,L,Y,0; CURRENCY,L,Z,0; INDICATORS,C,Z,1;&zSelection=DS-076596CURRENCY, EUR;DS-076596INDICATORS,OBS_FLAG;&rankName1=CURRENCY_1_2_-1_2&rankName2=INDICATORS_1_2_-1_2&rankName3=TIME_1_0_0_0&rankName4=GEO_1_2_0_1&sortC=ASC_-1_FIRST&rStp=&cStp=&rDCh=&cDCh=&rDM=true&cDM=true&footnes=false&empty=false&wai=false&time_mode=ROLLING&time_most_recent=true&lang=EN&cfo=%23%23%23%2C%23%23%23.%23%23%23)
10. Eurostat, Real GDP per capita, growth rate and totals, <http://ec.europa.eu/eurostat/tgm/table.do?tab=table&init=1&language=en&pcode=tsdec100&plugin=1>
11. <https://countryeconomy.com/labour/average-wage>, <https://www.reinischfischer.com/average-salary-european-union-2015>, [https://en.wikipedia.org/wiki/List\\_of\\_European\\_countries\\_by\\_average\\_wage](https://en.wikipedia.org/wiki/List_of_European_countries_by_average_wage)
12. <http://thegedi.org/global-entrepreneurship-and-development-index/>
13. <http://www.gov.am/files/docs/970.pdf>
14. <http://www.parliament.am/library/bazmakoxm/118.pdf>

**ТАДЕВОС АВETИСЯН**

*Заместитель министра труда и социальных вопросов РА, доцент кафедры международных экономических отношений АГЭУ*

**АРМАН САРГСЯН**

*Директор Национального института труда и социальных исследований, доцент кафедры экономической информатики и информационных систем АГЭУ, кандидат экономических наук*

**ТАТЕВИК ВАРДАНЯН**

*Ассистент кафедры международных экономических отношений АГЭУ*

**Анализ взаимодействий минимальной заработной платы и выбранных макроиндикаторов (на примере РА).** – В статье обсуждается роль и ценность минимальной заработной платы в контексте формирования здоровой социально-экономической среды. Была оценена корреляция между ключевыми показателями заработной платы в Армении и показателями экономического роста и занятости. Сделан описательный анализ 22 стран, в результате чего выявлено, что минимальная заработная плата в отдельных странах значительно чувствительна к средней заработной плате. Так же была разработана модель регрессии минимальной заработной платы.

**Ключевые слова:** минимальная заработная плата, государственное регулирование, эффективный размер минимальной заработной платы, описательный анализ, факторный анализ, модель регрессии.

JEL: E24, E27, J3

**TADEVOS AVETISYAN**

*Deputy Minister of Labor and Social Affairs of the Republic of Armenia, Associate Professor at the Chair of International Economic Relations at ASUE, PhD in Economics*

**ARMAN SARGSYAN**

*Director of the National Institute of Labour and Social Research Associate Professor at the Chair of Economic Computer Science and Information Systems at ASUE, PhD in Economics*

**TATEVIK VARDANYAN**

*Assistant at the Chair of International Economic Relations at ASUE*

**Analysis of Interactions of Minimum Wage and Selected Macro Indicators (on the RA Example).** – The article discusses the role and value of the minimum wage in the context of the formation of a healthy socio-economic environment. The

correlation between key salary indicators in Armenia and indicators of economic growth and employment has been assessed. A descriptive analysis of 22 countries has been carried out, as a result of which it has been realized that the minimum wage in individual countries is significantly sensitive to average wages. In addition, a minimum wage regression model has been developed.

**Key words:** *minimum wage, state regulation, effective size of minimum wage, descriptive analysis, factor econometric analysis, regression model.*

JEL: E24, E27, J3